«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1098-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2024 թվական N __ -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 1098-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33–րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 6–ի «Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» N 1098–Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1)Որոշման նախաբանը «21-րդ մասը» բառերից հետո լրացնել «, «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը» բառերով,

2)Որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 2-րդ, 17-րդ և 37-րդ կետերում (2024) թիվը փոխարինել (2025) թվով,

3)Հավելվածի 4-րդ կետում (1000 քառ. մետր) բառերից հետո լրացնել (ներառյալ) բառը,

4)Հավելվածի 11-րդ կետում (2023) թիվը փոխարինել (2024) թվով և (կամ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախարարությանը գումար հատկացնելու) բառերը հանել։

2.Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը տարածվում է մինչև սույն

որոշումն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա։

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։